



Կապիտալ
ինվեստմենտներ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Կապիտալ Ինվեստմենտներ»
փակ բաժնետիրական ընկերության
11 հուլիսի 2011թ.-ի
բաժնետերերի ընդհանուր ժողովում

Գլխավոր տնօրեն՝ Տ. Կարապետյան
11 հուլիսի 2011թ.

**ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Երևան 2011թ.

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կանոն 1-1. Կանոնակարգը: Անվանումը

- (ա) Սույն Կանոնակարգը ներառում է «Կապիտալ Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության ժամանակ ներկայացվող պահանջները, չափանիշները, մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը, մրցույթների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը:
- (բ) Սույն Կանոնակարգի անվանումն է ««Կապիտալ Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության կանոնակարգ», իսկ կրճատ անվանումը՝ «Կանոնակարգ»:

Կանոն 1-2. Կառուցվածքը: Կողմիֆիկացիան և հղումները

- (ա) Սույն Կանոնակարգը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ Գլուխ 1՝ «Ընդհանուր դրույթներ», Գլուխ 2՝ «Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրությանը ներկայացվող պահանջները և չափանիշները», Գլուխ 3՝ «Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցութի կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը»:
- (բ) Գլուխները համարակալվում են արաբական թվերով:
- (գ) Վերնագրերը միավորում են «Կապիտալ Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված Կանոններն ըստ գործունեության կամ կարգավորման առարկայի: Կանոնակարգի օգտագործման պարզության նպատակով վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է դրանում միավորված Կանոնների առարկան:
- (դ) Օգտագործման հարմարության և պարզության համար Կանոնները վերնագրվում են և համարակալվում՝ ըստ Վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2.1»-ը նշանակում է երկրորդ Վերնագրի ներքո գործող առաջին Կանոնը):
- (ե) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝
 - (1) Կանոնը բաղկացած է Ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն).
 - (2) Ենթականոնը բաղկացած է Կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող արաբական թվերով (օրինակ՝ (2)) կամ, եթե շարադրանքը առանձին տողերով չէ՝ հոմեական փոքր թվերով (օրինակ՝ (ii)), և
 - (3) Կետը բաղկացած է Ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ)) կամ, եթե շարադրանքը առանձին տողերով չէ՝ հոմեական փոքր թվերով (օրինակ՝ (ii)):
- (զ) Սույն Կանոնակարգում Հղումները կատարվում են հետևյալ կանոններով՝
 - (1) Վերնագրին հղումը կատարվում է Վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր Կանոնները.
 - (2) Սույն Կանոնակարգի որևէ Վերնագրի (Կանոնի, Ենթականոնի, Կետի և այլն) հղում կատարվում է առանց «սույն Կանոնակարգի» բառերի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին.
 - (3) Որևէ ձևին կամ աղյուսակին հղում ենթադրում է Կանոնակարգի Հավելվածում ներառված տվյալ ձևը կամ աղյուսակը:

Կանոն 1-3. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

- (ա) Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում «Կապիտալ Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից այն հաստատելու օրը:
- (բ) Սույն Կանոնակարգն ուժը կորցրած է ճանաչվում «Կապիտալ Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից այն ուժը կորցրած ճանաչելու օրը:
- (գ) Սույն Կանոնակարգի փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում «Կապիտալ Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից դրանք հաստատելու օրը:

Կանոն 1-4. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը

- (ա) Սույն Կանոնակարգի Կանոնները ներքին իրավական ակտ են և ընդունվում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածը և ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի «Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ը հաստատելու մասին» թիվ 41-Ն որոշումը (այսուհետ՝ ՀՀ ԿԲ որոշում):
- (բ) Սույն Կանոնակարգի Կանոնները մեկնաբանվում են ելնելով արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և ֆինանսական հաշվետվությունների կազմման ու ներկայացման հավաստիության և արդարացիության գնահատման սկզբունքներից:

Կանոն 1-5. Հասկացություններ

Սույն Կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- 1) «**Ընկերություն**»՝ «Կապիտալ Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերություն.
- 2) «**Աուդիտորական խումբ**»՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ.
- 3) «**Աուդիտոր**»՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից.
- 4) «**Ֆինանսական կազմակերպություն**»՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ:

ԳԼՈՒԽ 2. ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կանոն 2-1. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության տեխնիկական և ֆինանսական չափանիշները

- (ա) Ընկերությունն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին.
 - (1) ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 3 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող ՀՀ ԿԲ որոշմամբ նախատեսված աուդիտորական կազմակերպությունների վրա,
 - (2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առանվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 3 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ ACCA (Association of Chartered Certified Accountants), CPA (Certified Public Accountant) կամ CISA (Certified Information Systems Auditor)) փուլերի (ստանալու պահին) առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի հաշվապահների և աուդիտորների

ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

- (3) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազոր մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,
- (4) աուդիտորական կամզկերպությունը Ընկերության հետ կնքվող պայմանագրում համաձայնություն է տալիս ՀՀ կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու Ընկերության, աուդիտորական կազմակերպության և ՀՀ կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:
- (բ) Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել նույն ներդրումային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ ներդրումային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:
- (գ) Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության ժամանակ հաշվի է առնվում նաև Ընկերության և տվյալ աուդիտորական կազմակերպության միջև առկա աշխատանքային փորձը, մասնավորապես՝ նախկինում վերջինիս կողմից Ընկերությանը մատուցած աուդիտորական ծառայության որակը:
- (ե) Ընկերությունը անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար սահմանում է հետևյալ պայմանները՝
 - (1) աուդիտի ընդգրկման բնագավառները,
 - (2) աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները,
 - (3) աուդիտի իրականացման արժեքը,
 - (4) այլ պայմաններ՝ Ընկերության հայեցողությամբ, պարտադիր մրցույթի մասնակիցների համար:

Կանոն 2-2. Անկախ աուդիտորական կազմակերպությունների ընտրության մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը

Ընկերությունը, հիմնվելով սույն կանոնակարգին կից Աղյուսյակ 1-ով սահմանված չափանիշների վրա, ուսումնասիրում է աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները և գնահատում դրանք՝ նախապատվությունը տալով ամենաբարձր միավորներ հավաքած աուդիտորական կազմակերպությանը:

ԳԼՈՒԽ 3. ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կանոն 3-1. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը

- (ա) Ընկերության կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով:
- (բ) Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը պետք է հրապարակվի անցկացման ամսաթվից առնվազն 10 օր առաջ՝ նվազագույնը Ընկերության ինտերնետային կայքում:

- (գ) Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության վերաբերյալ հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝
- (1) մրցույթի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը,
 - (2) մրցույթի կայացման վայրն ու հասցեն,
 - (3) մրցույթի անցկացման և հաղթողին որոշելու կարգը,
 - (4) մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
 - (5) մրցութային առաջարկությունների ընդունման վերջնաժամկետը,
 - (6) այլ էական պայմանները:

Կանոն 3-2. Մրցույթի անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամկետները

- (ա) Աուդիտորական կազմակերպությունները մրցույթի առաջարկությունները ներկայացնում են երկու ծրարով, որոնցից առաջինում ներկայացվում է աուդիտորական ծառայության տեխնիկական, իսկ երկրորդում՝ ֆինանսական չափանիշների վերաբերյալ տեղեկատվությունը:
- (բ) Մրցույթի անցկացման օրն առաջինը բացվում է տեխնիկական չափանիշների վերաբերյալ առաջարկությունների ծրարը:
- (գ) Այն դեպքում, երբ առաջին ծրարում ներկայացված առաջարկը բավարարում է Աղյուսյակ 1-ով սահմանված տեխնիկական չափանիշներին, բացվում է երկրորդ ծրարը և գնահատվում են առաջարկի ֆինանսական չափանիշները, համաձայն՝ Աղյուսյակ 1-ով սահմանված ֆինանսական չափանիշների, հակառակ դեպքում՝ այն չի բացվում և ներկայացված առաջարկությունը համարվում է մերժված:
- (դ) Մրցութային առաջարկի երկրորդ ծրարը բացելուց հետո գնահատվում է առաջարկն ամբողջությամբ՝ համաձայն Աղյուսյակ 1-ի:
- (ե) Ընկերության կողմից կազմվում է մրցույթի անցկացման վերաբերյալ արձանագրություն, որտեղ նկարագրվում են մրցույթի առաջարկները, գնահատականներն՝ ըստ աղյուսյակի, հաղթող ճանաչված կազմակերպությունը, այլ տեղեկություններ: Արձանագրությունը հաստատվում է Գլխավոր տնօրենի կողմից՝ որոշման տեսքով:
- (զ) Գլխավոր տնօրենի կողմից արձանագրության հաստատմամբ մրցույթի արդյունքները համարվում են նախնական համաձայնության արժանացած և ներկայացվում են Ընկերության կառավարման համապատասխան մարմիններին՝ տարեկան աուդիտի իրականացման վարձատրության չափը և մրցույթի արդյունքները հաստատելու:
- (է) Բաժնետերերի ժողովը հաստատում է արտաքին աուդիտն իրականացնող կազմակերպությանը և հանձնարարում է կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր:
- (ը) Բաժնետերերի ժողովի կողմից մրցույթում հաղթած կազմակերպությանը հավանության չարժանանալու դեպքում հայտարարվում է նոր մրցույթ, ընդ որում՝ Բաժնետերերի ժողովը կարող է վերանայել մրցույթի՝ իր կողմից սահմանված պայմանները և սահմանել նոր պահանջներ ու չափանիշներ:

ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ

Հավելված 1

Աղյուսակ 1

	Չափանիշ	Միավոր	Կշիռ %	Ընդամենը	Մեկնաբանություններ (գնահատվում է եռաստիճան սանդղակով՝ 0-3 միավոր)
Տեխնիկական չափանիշներ	Տվյալ աուդիտորական կազմակերպության կողմից նախորդ տարում սպասարկված ՀՀ ֆինանսական կազմակերպությունների քանակը		100		<ul style="list-style-type: none"> 0 ֆինանսական կազմակերպություն – 0 մինչև 4 կազմակերպություն – 1 5-7 կազմակերպություն – 2 8 կազմակերպություն և ավելի – 3
	Տվյալ աուդիտորական կազմակերպության ՀՀ-ում և/կամ միջազգային ճանաչումը (հեղինակությունը)		90		<ul style="list-style-type: none"> աշխատում է միայն ՀՀ-ում – 0 իրականացնում է միջազգային գործունեություն, սակայն միջազգային ռեյտինգավորմամբ լավագույն տասնյակում չէ – 1 միջազգային ռեյտինգավորմամբ ընդգրկված է լավագույն տասնյակում – 2
	Տվյալ աուդիտորական խմբի անդամների կուտակային աշխատանքային փորձը		80		<ul style="list-style-type: none"> մինչև 3 տարի – 0 3-5 տարի – 1 5-10 տարի – 2 10 տարի և ավելի – 3
	Աուդիտի ընդգրկման բնագավառները		90		<p>ակտիվների, արժեթղթերի, պարտավորությունների, տոկոսային եկամուտների և ծախսերի ծավալային արժեքով և այլ չափանիշներով՝</p> <ul style="list-style-type: none"> մինչև 25 % – 0 26-35 % – 1 36-50% – 2 51% և ավելի – 3
	Աուդիտի աշխատանքային խմբի ղեկավարի որակավորումը		80		<ul style="list-style-type: none"> մրցութային առաջարկների մեջ ամենաբարձրը – 2 մյուս առաջարկները – 1
	Աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների թվում (ACCA, CPA, ՀՀԱԱ կամ այլ) որակավորման վկայականներ ունեցող աշխատակիցների քանակը		80		<ul style="list-style-type: none"> 1 աշխատակից – 1 2 աշխատակից – 2 3 աշխատակից և ավելի – 3
	Տվյալ աուդիտորական խմբի կուտակային աշխատանքային փորձը ֆինանսական կազմակերպությունների աուդիտի ոլորտում		80		<ul style="list-style-type: none"> մինչև 3 տարի – 0 3-5 տարի – 1 5-7 տարի – 2 7 տարի և ավել – 3
	Աուդիտի անցկացման ժամկետները՝ առաջին այցելությունից մինչև վերջնական եզրակացության ներկայացումը		60		<ul style="list-style-type: none"> 4 ամսից ավելի – 0 3-ից 4 ամիս – 1 2-ից 3 ամիս – 2
	Տվյալ աուդիտորական կազմակերպության հետ համագործակցության փորձը		70		<ul style="list-style-type: none"> համագործակցության բացակայություն – 0 նպատակային ծառայությունների մատուցում – 1 1 ֆինանսական տարվա աուդիտ – 2
	Աշխատանքների ծախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրումը՝ ռիսկերի բավարար փոխհատուցման պահանջի տեսքով		70		<ul style="list-style-type: none"> դրույթի բացակայությունը – 0 մասնակի բավարարման դրույթի առկայությունը – 1 ամբողջական բավարարման դրույթի առկայությունը – 2

	Ընդամենը միավորներն՝ ըստ տեխնիկական չափաանիշների	X	X		
Ֆինանսական չափանիշներ	Աուդիտի ծառայության արժեքը		100		<ul style="list-style-type: none"> • ամենաբարձր արժեքը – 0 • 2-րդ բարձր արժեքը – 1 • 3-րդ և ավելի ցածր արժեքները – 2
	Աուդիտի ծառայության արժեքից կանխավճարի վճարման դրույթի առկայությունը պայմանագրում		50		<ul style="list-style-type: none"> • 51% և ավելի – 0 • 31-50% – 1 • մինչև 30% – 2
	Ընդամենը միավորներ՝ ըստ ֆինանսական չափանիշների	X	X		
	Վերջնական միավոր	X	X		